ՄՈԽՐԱՀԱՆ ԴԱՎՐԻՇԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլել ա, չի ըլել՝ մի դուքանչու տղա։ Օրերի մի օրը դրան պատահել ա մի դավրիշ։ Էդ դավյուիշը էդ տղի մոտ ծառայելիս ա ըլել, միշտ կրակի մոխիրը դուրս հանելիս ա ըլել. անումը դրել են՝ Մոխրահան դավրիշ։
Օրերի մի օրը դավրիշը էդ տղին ասում ա.— Արի դու ձեր թքավորի ախչիկը ուզե։
Նա էլ ասում ա.— Ինչպե՞ս կարելի ա, որ թքավորը ինձ ախչիկ տա. ես մի դուքանչի մարդ եմ։
Դավրիշն ասում ա.— Ես ընենց բան կանեմ, որ թքավորի ախչիկը ինքը իրան ոտով կգա քու կուշտը։
Տղեն ասում ա.— Եփոր նա գա, ես էլ կընդունեմ։
Դավրիշը գիր ա անում, էդ ախչիկը քշերները գալիս ա էդ տղի կուշտը։ Մի վախտ անցնում ա, ախչիկը էրկուֆոքիսանում ա։ Թքավորը տենում ա, ասում ա.— Ախչի՛, էդ ումի՞ց ա։
Ասում ա.— Փլան դուքանչուց ա։
Թքավորը հարցնում ա, թե.— Նա գեր քու կո՞ւշտը, թե դու գնեիր։
Ախչիկն ասում ա.— Ե՛ս գնեի։
— Էդ ո՞նց ա, որ դու գնեիր։
Ասում ա.— Քշերը իմ օթախումը քնած վախտս մեկ էլ տենում ի, որ չորս պատն էլ կրակ դառավ, ու մի քուչա բաց էլավ։
Էն քուչով փախչեի, գնեի, տենեի էն տղի դուքանումն եմ, ընդի էլ ո՛նչ կրակ կար, ո՛նչ մի բան էլա։ Ըտի մնեի, էլեդ քչերը եդ գեի։
Թքավորն ասում ա.— Ախչի՛, կարա՞ս էն տղին խաբես, բերես ըստի։
Ախչիկն էլ ասում ա.— Տենանք։ Մեկ էլ որ գնամ, իրան կասեմ, բալի կարենամ բերեմ։
Ախչիկը մի հետ էլ գնում ա, էդ տղին ասում ա.— Իմ ոտը ծանդռն ա, հմի էլ դու արի, ես մեղք եմ, ամեն հետ ես եմ գալի։
Էդ տղեն ասում ա.— Լա՛վ, էքուց ըիկուն ես կգամ։
Էդ տղեն դավրիշին կանչում ա, ասըմ ա, թե.— Դավրի՛շ, նրա ոտը ծանդռն ա, կարում չի գա, կարելի՞ ա ես գնամ։
Դավրիշն ասում ա.— Շատ լավ, ըիկունը,— ասում ա,— գնալիս կգաս իմ կուշտը։
Գնալու վախտը գնում ա Դավրիշի կուշտը։
Ասում ա.— Դավրի՛շ, գնում եմ, ի՞նչ ես ասում։
Դավրիշը դրա ունքերին սուրմա ա քսում, ասում ա.— Գնա՛, էլ չես էրևալ, գնա համարձակ մտի ամարաթը, էլ քի օչով տենալ չի։
Էդ տղեն գնում ա, մտնում ա էդ ախչկա օթախը։ Օչով նրան տենում չի, էդ ախչկա համա հաց են բերում, մի աման էլ կերակուր։ Դեռ էրկու թիքա ախչիկը չըկերած՝ կերակուրը հատնում ա։
Իրան ղարավաշին ասում ա.— Ի՛նչ քիչ ես բերել, գնա էլի բի։
Գնում ա, բերում։ Էդ վախտն էլ էրկու թիքա վեր ա ունում. հատնում ա։
Ասում ա.— Ախչի՛, էլ բի՛։
— Թքավորի ախչիկն ապրած կենա,— ասում ա ղարավաշը,— էրկու բաժին կերել ես, դու կշտացա՞ր ոչ։
Ամոթու էլ բան չի ասում, սոված ա մնում։ Եփ ղարավաշը դուս ա գնում, էդ տղեն ախչկան էրևում ա։
Ախչիկն ասում ա.— Դու ըստի ի՞ր, ընդուր կշտանայի ոչ։

Եղնա էդ ախչիկը դուս ա գնում, տղին թողում ա օթախումն ու դուռը դրսից փակում։ Գնում ա հորը ասում.— Տղեն էկել ա, հրեն իմ օթախումը։
Թաքավորը մարդ ա ղրգում, որ բռնեն, տանեն իրան կուշտը։ Գալիս են բաց անում, տեսնում են, որ օքմին չկա։
Գնում են թքավորին ասում, թե.— Օքմին չկա։
Թքավորն էլ ասում ա.— Ինչպե՞ս չէ, սուտ ա՞ ասում իմ ախչիկը։ Գնացեք խոտ ածեք օթախի մեջը ու կրակ տվեք, ըտի մի հնարք կա։
Գնում են խոտ ածում, կրակում։ Էդ տղեն որ քրտնում ա, ձեռը ըսենց էրեսին ա քսում, սուրմեն վեր ա գալի, թլիսմ անցնում ա, տեսնում են, որ հրեն ընդի մի ջահել տղա կազնած։ Ձեռիցը բըռնում են, տանում են թքավորի կուշտը։ Թքավորն ասում ա.— Դու քանի՞ գլխանի ես, որ ըտենց բան ես անում։
Ասում ա.— Թքավորն ապրած կենա, ինչ ուզում ես արա, ես եմ արել։
Թքավորը հրաման ա տալի, թե.— Տարեք դրան խեղդեցեք։
Դրան տանում են, որ խեղդեն, Դարվիշը իմանում ա, թքավորի ջեբիցը անգին տերօղորմին հանում ա ու իրան նադիրի կերպարանքով գնում ա էն խեղդող մարդկանց կուշտը։
Ասում ա.— Թքավորի օղորմութինը հասել ա, է՛ս էլ տերօղորմիան, վեր թողեք։
Դրան վեր են թողում, գնում ա իրա դուքանը։
Գալիս են, թքավորը հարցնում ա.— Խեղդեցի՞ք։
Ասում են.— Չէ՛։
Զիգրվում ա.— Խի՞։
Թե, ասում ա.— Դու ասիր, մենք էլ վեր թողինք։
— Ո՞ւմ ասի,— ասում ա,— ես։
Ասին, թե.— Քու նազիրդ քու տերօղորմիան բերուց, ասավ՝ վեր թողեք, մենք էլ վեր թողինք։ Տերօղորմիան էլ տալիս են իրան։
Կանչում ա նազիրին թե.— Ինչպես ա, որ դու էկել ես իմ տերօղորմիան գողացել, տարել ես վեր թողուլ տվել էդ տղին։
Դա օրթում ա ուտում, թե.— Ես բանե խաբար չեմ։
Դրանք միտքն են անում, թե՝ էս ինչպես բան ա։ Ասում են, թե էդ տղի կշտին մի Դավրիշ կա, էդ Դավրիշն ա անում։
Թքավորն ասում ա.— Գնացեք էդ Դավրիշին բերեք ըստի։
Գնում են Դավրիշին ասում.— Թքավորը քեզ կանչում ա։
Դավրիշը ասում ա.— Ես թքավորի հետ գործ չունեմ։
Գնում են թքավորին ասում են, թե.— Գալիս չի՛։
Ասում ա.— Գնացե՛ք, բռնեցեք, կապեցեք ու բերեք։
Գնում են ասում, թե.— Արի՛, թքավորը անպատճառ ուզում ա։
Էլի գնում չի։ Բռնում են դրան, որ կապեն. կոնները բռնում են, կուռը պոկ ա գալի։
Թողում են գնում, թքավորին ասում.— Ըսենց գնացինք, բըռնեցինք, կոնները պոկ էկան։
Ասում ա.— Խո՛ սաղ ա, գնացեք ջանդակը բերեք։
Գալիս են տեսնում, որ հրես սաղ նստած մոխիր ա դուս տալի։
— Դավրի՛շ,— ասում են,— արի՛, քե թքավորը կանչում ա։
Դավրիշն ասում ա.— Ես թքավորի հետ գործ չունեմ։
Դրան բռնում են կոնիցը, որ զոռով տանեն՝ կուռը պոկ ա գալի, մեկել կոնիցն են բռնում՝ էն էլ ա պոկ գալի, ոտնիրն են բռնում՝ ոտն էլ ա պոկ գալի, գլխիցն են բռնում՝ գլուխն էլ ա պոկ գալի. մի քթոց են բերում, ջանդակը ածում քթոցի մեջ, շլակում, տանում։ Գնալիս ճամփին մի

փեյնի վրա ջուր ա դառնում ու խշշալով թափվում փեյնի մեջը։ Գնում են էդ մարդիկը թքավորին ասում, թե ըսենց բան է լավ։
Թքավորն ասում ա.— Հըլը գնացեք ղավվրն էլեք ընդի։
Գնում են, տենում հլե ընդի մոխիրն էլի դուս ա տալի։ Գալիս են թքավորին ասում, թե.— Էլի ընդի մոխիրն ա դուս թափում։
Թքավորը ինքը վեր կացավ, էկավ Դավրիշի մոտ, ասավ.— Դու ե՞ս էդ բաները անում։
Ասավ.— Ե՛ս եմ անում։
Ասավ.— Հըմի ի՞նչ անեմ քեզ։
— Լավն էն ա,— ասավ,— ախչիկդ տաս էդ տղին։
Թքավորը համոզվեց, ախչիկը տվուց էդ տղին. օխտն օր, օխտը քշեր հրսանիք արին, նրանք հասան իրենց մուրազին, դու էլ հասնես քու մուրազին։
Չարն ընդի, բարին ըստի։
Աստծանե իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարհին։